


EL EDİYE
277
YANESİ



Հ Ե Ր Ք Ո Ւ Մ Ն
Մ Ը Ս Ի Ս Լ Բ Ը Գ Բ Ո Յ Ն
Մ Է Ջ Ե Ղ Ա Ծ.

Պ Ա Մ Ա Ն Թ Ք Ի Բ Ե Ն ԵՒ Պ Ի Ե Թ Ի Մ Ի Ա Ն Ա Ք

Յ Օ Գ Ռ Ի Ը Ն Ծ Ո Յ Ն
ԵՒ

Ո Ւ Գ Գ Ը Փ Ը Ռ Ի Վ Ը Բ Գ Բ Ե Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն


Գ Լ Խ Ը Ի Ո Ր Ո Ւ Թ Ե Ը Ն


Հ Ռ Ո Վ Մ Է Ա Կ Ա Ն Ն Ո Ւ Բ Բ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ

Գ Լ Ը Լ Ը Թ Ի Ը

Ի Տ Պ Ը Բ Ը Ն Ի Թ Ե Լ Ե Կ Ո Ը Ց Օ Ս Ի

— 1854 —





Հ Ե Ր Ք Ո Ւ Մ Ն
Մ Ը Մ Ի Մ Լ Ր Ա Գ Ր Ո Յ Ն

Մ Է Զ Ե Ղ Ա Տ

Պ Ա Պ Ա Պ Ա Պ Ա Պ Ա Պ Ա Ե Վ Մ Պ Պ Պ Ա Պ Ա Պ Ա Պ Ա Պ Ա

Յ Օ Գ Ռ Ւ Է Ն Օ Ռ Յ Ն

Ե Ի

Ո Ւ Գ Գ Լ Փ Լ Ռ Վ Լ Ե Ր Գ Ե Պ Ե Տ Ո Ւ Թ Ւ Ի Ն

Գ Ռ Լ Ե Ի Ռ Ր Ո Ւ Թ Ւ Ե Լ Ն

Հ Ռ Ո Վ Մ Է Ա Կ Ա Ն Ս Ո Ւ Ր Ի Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ

Երկու տարիէ՛ի վեր աղգիս լրագիրները շատ բաներ
գրեցին ընդդէմ Մխիթարեանց և ընդդէմ Հռովմէական ե-
կեղեցւոյն . Եսոնց գրածը ո՛րչափ որ առանց իրաւանց , բայց
կային որ քիչ մը խոհեմաբար գրուած էին , և կային որ խիստ
յանդուգն և անխոհեմ . որոնց ինչուան այս օրս աւելորդ համա-
րեցանք պատասխանել , գիտնալով որ կատարեալ լռութիւ-
նը այնպիսի հակառակախօս գրութեանց արժանաւոր պատաս-
խանն է . միայն կը ցաւէինք որ լրագրաց կարեւոր երեսները
կրօնական ընդդիմախօսութիւններով կը ծեփուէին , Եսոնցմէ
մէկը եղաւ անցեալները Մասիս լրագրոյն 114 թիւը , որուն
մէջ կարդացինք յօդուած մը լինախատանաց խօսքերով ընդ-

SELEDIVE
KUTUPHANESI
No 277

դէմ Հռովմայ սրբազան Պապերուն և Մխիթարեանց, որն որ
 ա՛լ մեր լռութեան չափը լեցուց, և միտք բերինք իմաստնոյն
 այն խօսքը թէ յամանակ կայ խօսելոյ և ժամանակ կայ
 լռելոյ. ուստի մեր լռութիւնն ալ կը լուծենք որպէս զի
 չըլլայ թէ մեր լռութեամբը ոմանց հոգեկան և մարմնական վը-
 նաս մը պատճառէ, անոր համար առ այժմ գէթ հարեանցի
 մը կը պատասխանենք այն անիրաւ թշնամանացը : Այս յօ-
 դուածը ո՞րչափ բարկութիւն և զարմանք միանգամայն պատճա-
 ռեց մեզի, չենք կրնար բացատրել : Բարկութիւն, վասն զի
 չէինք յուսար ամենեին որ մարդուս վրայ այս աստիճան լըր-
 բութիւն և յանդգնութիւն կարենայ երևիլ. զարմա՞նք, վա-
 սըն զի չէինք կարծեր որ տգիտութիւնը այնչափ յաղթանակէ
 մարդուս վրայ, որով լոյսը խաւար, խաւարը լոյս դնէ մէկը :
 Այժմ այս յօդուածը առանձին տեսր մի տպագրած դուրս
 ելլէր, այնչափ չէինք զարմանալ և ցաւիլ, վասն զի կ'ըսէինք
 թէ մասնաւոր մարդու կարծիք է, ո՞րչափ որ կը տեսնենք
 ազգային լրագրոյ մէջ տպագրած, և այնպիսի լրագրոյ մէջ ո-
 րուն պատասխանատուութիւնը կը կարծենք որ պատրիար-
 քարանին եկեղեցական և աշխարհական ժողովները վրանին ա-
 ռած են : Արով և բովանդակ ազգը արհամարհելի կ'ըլլայ
 այնչափ բազմութեան երևելի ուսումնականաց Աւրոպիոյ, և կը
 բամբասուի անոնցմէ չէ թէ միայն որպէս հերձուածող, հապա-
 նաւ տգէտ և անտեղեակ իր նախնեաց վարդապետութեանը :

Այս յօդուածին մէջ սրբազան Պապերուն ոմանց սուտ
 կամ իրաւ անվայել գնացքը մէջ բերելով, անով հեղինակը
 կ'ուզէ մուր քսել Հռովմէական եկեղեցւոյն վրայ, որոյ գը-
 լուխ սրբոյն Պետրոսի առաքելապետին յաջորդներն են, և ան-
 կէց հարկաւ հետեցընել թէ այս եկեղեցւոյն հետեողքն են յի-
 մարք և մոլորեալք, և միայն ինքն և իւր համամիտք են ի-
 մաստունք և անմոլարք :

Հոս լաւ կ'ըլլար մէկիկ մէկիկ այն բերած վարքերը քըն-

նել ճշմարտասէր և ուղղախոհ պատմիչներ մէջ բերելով, որպէս զի ցուցանենք թէ ո՛րչափ ստուծիւն և խարդախուծիւն մտած է այն վարքերուն շատին մէջ :

Բայց խօսքերնիս աւելորդ տեղը չերկընցընելու համար, կ'ըսեմք միայն թէ որ ամէն զրուցուած կամ գրուած բաները իրաւ ըլլային, պէտք էր որ հաւատայինք ամէն զրպարտութեանց, և ամէն անիրաւ գործոց իրաւունք տայինք: Բայց ենթադրենք ալ որ այն վարքերը ամէնքն ալ ստոյգ ըլլան, և սակայն ինչպէս կրնանք անկէց հետևցընել թէ Հոովմէական եկեղեցին մոլորեալ է, և չէ Պետրոսի առաքելապետին յաջորդութիւնը, որով և կարենանք խորշիլ անկէց և չհրնադանդիլ:

Բաւական և բաւականէն ալ աւելի գրութիւնք եղած են ցուցանելու համար թէ Պետրոսի առաքելապետին յաջորդութիւնը բոլոր աշխարհ տարածուած ընդհանուր քրիստոսական եկեղեցւոյն գլուխ կարգեալ է 'ի Վրիստոսէ Տեառնէ մերմէ: Աշմարտութեան սէր ունեցողները և աննախանձ սրտիւ վափագողները թող կարդան զանոնք:

Յիրաւի փափագելի բան էր որ ամէն եկեղեցւոյ զըլուխ կեցած անձինքը զՎրիստոս կերպարանէին յինքեանս սրբասէր կենօր և ուղիղ քաղաքավարութեամբ, բայց գիտենք որ Վրիստոս իր եկեղեցին բոլորովին մարդու չըյանձնեց, և ոչ յարութենէ ետքը հեռացաւ մեկնեցաւ անկէց, վասն զի կ'ըսէ « Ոչ թողից զձեզ որքս » . ուստի եկեղեցւոյ զըլուխներէն ոմանք մարդկային տկարութեամբ զգածեալ թէ որ անվայել կեանք մը վարեն, անով քրիստոսական եկեղեցւոյն արատ մը չգար, որոյ բուն աներևոյթ զըլուխն է ինքն տէրն մեր Յիսուս Վրիստոս, հապա միայն իրենց անձանցը կը վնասեն: Վասն զի իրենց մեղադրելի վարքը չուսուցին իբրև օրինաւոր և հաւատոյ վարդապետութիւն: Ոչ որ ուղղափառ ըսած է որ Պապն անմեղանչական է, հա-

պա թէ՛ Հոռովմայ սուրբ եկեղեցւոյն վարդապետութիւնը ուղ-
ղափառական է միշտ և անսխալ : Հակառակորդը ասոր ներ-
հակը ցուցանելու էր մեզի, չէ թէ անձնական վարքերը սուտ
իրաւ քննել : Այժմէ հոս այլևայլ ազգաց առաջնորդաց ոմանց
և վարդապետաց անկարգ գնացքը և անօրէնութիւնքը ուղե-
ինք շարել և ցանկ մը ընել, ինչպէս որ ըրած է յօդուա-
ծին հեղինակը Հոռովմայ սրբազան Հայրապետներուն վրայ,
գիտենք անշուշտ որ կը սարսէին կը քստմնէին ընթերցողք .
և չուզելով կ'ըսեմ, թէ հեղինակին այն խօսքերը որ կ'ըսէ
Հոռովմայ աթոռոյն համար, թէ « Միայն իր մոլութիւններու-
մը ծանօթ եղած է մեզի, և երբէք կամ շատ քիչ իր առա-
քինութիւններովը » . և թէ « Չիկայ աշխարհի վրայ աթոռ-
մը ուր առաջինութիւնը այնչափ քիչ տեսնուած ըլլայ, որ-
չափ պէտք էր մոլութիւնը քիչ տեսնուէր » , այս խօսքերը
օտար եկեղեցեաց վրայ աւելի ճշմարտութեամբ հաւաստած
կը տեսնէր. ու ինքը որ շնորհակալ կ'ըլլայ ութևտասներորդ
և իննևտասներորդ դարերուն, որոնց մէջ դադրեցաւ կ'ըսէ
Հոռովմայ քահանայապետաց բունութիւնները, նոյն դարերը
կը բողոքեն իր ամենագովելի արևելեան եկեղեցեաց առաջ-
նորդներուն ըրած բարբարոսական գործոցը . որոնք ստուգե-
լու համար բաւական է միայն միտք բերել մեր ազգին մէջ
1828ին և 1829ին հակառակ քրիստոսական ոգւոյն եղած ա-
նօրէն գործերը, որոնք անհնար է յիշել առանց կարմրնա-
լու : Մայց լաւ է չյիշուելու բաները բերան չառնուլը և լը-
նութեամբ անցնիլը, վասն զի չենք ուզեր թշնամանողական
այլ պաշտպանողական զէնք գործածել . և ոչ իսկ ազգերնիս
նախատել և արհամարհել, և կամ մասնաւորաց պակասու-
թիւնները թէ յեկեղեցական կարգէ ըլլան և թէ յաշխարհա-
կան կարգէ ընդհանուրին ընծայել :

Քրիստոս տէրն մեր աստուածային նախատեսութեամբ
գիտնալով որ երբեմն երբեմն պատրիարդական և եպիսկոպո-

սական աթոռները նստին պիտի անարժան անձինք, օրինակա-
մեզի բացատրեց, ըսելով յայտնապէս, թէ « Յատու Մով-
սեսի նստան գպիրքն և փարիսեցիք », բայց չըլլայ որ անոնց
վարքէն հաւատոյ ծուռ հետեւութիւն մը հանենք, կ'ըսէ ան-
միջապէս թէ « Սամենայն զոր ինչ ասեն ձեզ արարէք, բայց
ըստ գործոց նոցա մի՛ առնէք » : Անմեղանչականութիւն և
անյանց ըլլալ, աստուածութեան միայն տրուած է, մարդ-
կութեան ոչ երբէք, ուստի ո՛րչափ կը սխալինք թէ որ մաս-
նաւոր Քահանայապետներուն վարքէն ընդհանուրին վրայ հե-
տեանք հանենք, և անով յանդգնինք Հռովմայ աթոռոյն սը-
խալականութիւնը ցուցանել :

Յօդուածին հեղինակը Արքազան պապերը նախատելու
մտքով Հռովմայ ժողովրդեան վարմունքը մէջ կը բերէ, որով
երկու իրարմէ զատելու մեծամեծ խնդիրներ իրարու հետ
կը խառնէ, և ինքն իրեն հակառակախօսելով կ'ուզէ արատ
քսել Հռոմէական եկեղեցւոյն սրբութեանը վրայ, որոյ մէջ
եթէ կան գէշ մարդիկ թէ յեկեղեցական կարգէ և թէ
յաշխարհական կարգէ, կան նաև շատ աստուածարեալ ան-
ձինք : Բայց կ'ուզէինք գիտնալ թէ ո՛ր ազգն է կամ քաղա-
քը այսօրուան օրս որ քան զՀռովմ աւելի բարեպաշտ և
առաքինի ըլլայ : Այս խօսքիս ճշմարտութիւնը կրնան անոնք
միայն գիտնալ, որոնք Աւրոպա և Ասիա պըտըտեր ու տե-
սեր են : Թէ որ մէկուն գնացքէն կարենայինք իրեն հաւատ-
քը հետեցընել, այն ատեն պէտք էր քրիստոսական հա-
ւատքին արատ դնէինք, որ քա՛ւ լիցի, որովհետև և ոչ մէ-
կերնիս կրնանք խղճմտանօք կատարեալ քրիստոնեայ համա-
րիւ ինքզինքնիս : Անոր հակառակ այլազգեաց մէջ կան այն-
պիսի ընտիր և առաքինի և խղճմտանքաւոր անձինք, որոց
հաւասար շատ անգամ դժուարաւ կը գտնուի, քրիստոնէից մէջ
միթէ կրնանք հետեցընել թէ ուղիղ է իրենց հաւատքը և
վարդապետութիւնը : Տես հեղինակին ծուռ տրամաբանու-

Թիւնը որպիսի սխալ և մոլորական հետեանքներու մէջ կը ձգէ : Ուրիշ է զրուցելը թէ քրիստոնէական աստուածա- յին կրօնի պաշտօնատար անձանց վարքը պէտք էր որ աս- տուածային ըլլար, ինչպէս էր հին քրիստոնէից : ուրիշ է զրու- ցելը, թէ որովհետեւ հիմակուան քրիստոնէից վարքը գէշ է, ուրեմն և կրօնն ալ գէշ է, որ բոլորովին սխալ հետե- անք է : Ասմ մասնաւորելով, թէ որովհետեւ այս ուղղա- փառ աթոռոյն հետևող ժողովրդեան վարքը գէշ է, ուրե- մէջ աթոռն ալ սուրբ չէ :

Կը զրուցէ յօդուածին հեղինակը թէ, « Զուովմայի ա- թոռը կը ջանայ տէրութեան մը ազգի մը գերդաստանի մը մէջ սէրը և միաբանութիւնը և եղբայրսիրութիւնը հեռացը- նել, լուսաւորութիւնը և քաղաքակրթութիւնը խափանել 9. ասոնք ամէնքն ալ նորաղանդից խօսքեր են, որոնք շատ ան- գամ կարգացեր ենք անոնց գրքերուն մէջ և լսեր ենք : Ըմէն խելացի մարդիկ կ'ըսեն թէ թշնամուոյ խօսքը շատ անգամ հեռի կ'ըլլայ 'ի ճշմարտութենէ և խարխուլ հիման վրայ հաստատեալ : Թող որ նոյն իսկ նորաղանդից մէջէն խելա- ցիները, յայտնապէս կը վկայեն թէ Պապերուն շատերը երևելի եղած են վարուք գիտութեամբ և քաղաքականու- թեամբ : Այլ թէ երբեմն Զուովմ հակառակորդին ըսածներուն համեմատ գործած տեսնուի, թշնամին պէտք է ներսէն փըն- տուել և ոչ գրսէն, վասն զի գիտենք որ ներքին թշնամին քան զարտաքին թշնամին շատ աւելի մնասակար է : Ըսած- նուս ճշմարտութիւնը գիտնալու համար գնա կարգա Ներսէս Պալիենցին պատմութիւնը, որ էր Արմեայ եպիսկոպոս, և կը սովորիս յանցանքին տէրը թէ Զուովմ է չէ նէ Պալիենցը, և իւր գործակիցը Սիմէոն պէկ Աարնոյ եպիսկոպոսը : Դըժ- բաղդարար այսպիսի Պալիենցներ չեն պակսած ազգերնուս մէջ շատ անգամ : Բաց ասկէց պէտք է գիտնալ նաև, որ Զուովմայ գահն ալ ըստ ինքեան մէկ հոգևոր թագաւորու-

Թիւն մը ըլլալով, ունի իրեն մասնաւոր պաշտօնատեղիներ
և պաշտօնատարներ, որոնք թէ որ երբեմն արտաքին գոր-
ծոց մէջ ստոյգ տեղեկութիւն չառնլով տեղեաց հեռաւո-
րութեանը և անձանց բաւական ծանօթութիւն չունենա-
լուն պատճառաւ, թէ որ անյարմար գործողութիւն մ'ալ ը-
նեն կամ որոշեն, որ չէ հաւատոյ խնդիր, անկէց ամենևին
վնաս մը չգար սրբազան Պապին գլխաւորութեանը և իւր
եկեղեցւոյն. վասն զի այլ է Հռոմէական եկեղեցին, և այլ
նոյն եկեղեցւոյն գլուխը ու իր պաշտօնատարները և պաշտօ-
նատեղիները:

Յայտնի բան է որ կիրքն ու պատճառաբանութիւնը
մէկտեղ չեն կրնար զուգընթանալ. պատճառաբանութեամբ
խօսողը կիրք չբանեցըններ, կրիւք խօսողը բոլորովին կը կո-
րուսանէ պատճառաբանութիւնը: Այսպէս Մասիսին հեղի-
նակը կրիւք լցեալ առանց ամենևին պատճառաբանելու կ'ու-
զէ իմաստական և անկրօնական ծաղրաբանութեամբ Հը-
ռովմայ քահանայապետաց յարգը նուազեցընել, ըսելով թէ
Նորկինքը արքայութեան մէջ կանգնով տեղ կը ծախեն. և
թէ ապագային մէջ գործուելու մեղաց կանխաւ թողու-
թիւն կուտան: Ա'երևի որ յօդուածին հեղինակը նոր Հը-
ռովմէական եկեղեցի մը երևակայեր է, որոյ Պապերը այս-
պիսի իշխանութիւններ կ'ունենան կոր. վասն զի մեր յար-
գած ու պատուած Սրբազան Պապերը այսպիսի իշխանու-
թիւններ չունին: Վարձեալ կը բամբասէ թէ աշխարհք ապա-
կանող Նիզուիթները 'ի թիւս սրբոց կը դասեն: Թողունք
այն խնդիրը թէ Նիզուիթները վնասակար եղեր թէ օգտա-
կար, ըսենք միայն թէ ո'վ կրնայ զրուցել որ այնպիսի կը-
րօնի մէջ ուր բիւրաւոր միանձունք առաջ եկեր են ու երևե-
լի քարոզիչներ ելեր են, չկարենան սրբակաց անձինք գտնը-
ւիլ. միթէ այսչափ տկար կը համարի Աստուծոյ կարողու-
թիւնը: Իսկ սրբոց ոսկորներուն մասունքը ծաղրելն ու յան-

դըզնարար ոչխարի կամ կովու ոսկոր կոչելը, որն որ անվա-
յել է քրիստոնէի բերնին, ուրիշ բան չէ եթէ ոչ բոլոր
քրիստոնէութիւնը ու նաև իրեն ազգը ու եկեղեցին ծաղ-
րել. ուստի անոր վրէժխնդրութիւնը կը թողունք իր եկե-
ղեցւոյն պաշտօնեայնեան, որոնք կը գոչեն բարձրաձայն.

« Անդանի ոսկերք սոցա հիւանդաց բժիշկ » :
 Այսպէս յօդուածին հեղինակը սրբազան Պապերէն ու-
ժանց անընդունելի վարքը, նմանապէս և ուրիշ կարկատուն
և փցուն պատճառներ մէջ բերելով և նախատալից խօսքեր
դիզելէն ետև, լրբարար ամենայն քաղաքավարութեան օ-
րէնք ոտքի տակ առնելով, ու մարդկութեան և ոչ պղտի նը-
շոյլ մը վրան թողելով, կը պոռայ կը կանչէ. « Չենք ճանչ-
նար Պապին ոչ միայն Աստուծոյ փոխանորդ, հայր ամե-
նայն հաւատացելոց, Վրիստոսի եկեղեցւոյն գլուխ և հո-
վուապետ և կեդրոն ըլլալու պաշտօնը, որ Աստուծոյ դէմ
հայհոյութիւն է, այլ և ոչ իբրև ժամկոչ և դոնապան Վը-
րիստոսի եկեղեցւոյն ». և թէ « Մեր գեղացի պարզ համեստ
և բարեպաշտ քահանան, Հռոմի Պապէն անհամեմատ կեր-
պով բարձր և պատուական է մեզի » :

Ահ, որպիսի՛ յանդգնութիւն, հարիւր եօթանասուն
միլիոն ժողովուրդ իրեն հետևող ունեցող պատկառելի Վըլ-
խոյ մը, որուն վրայի քահանայապետական և թագաւորական
աստիճանին մեծութիւնը նոյն իսկ մեր () սմանեան կայսերու-
թիւնը կը ճանչնայ կը յարգէ ու կը պատուէ, այսպիսի
ծանր նախատանաց խօսքեր զրուցել, Չղիտէր ողորմելին որ
Հայ կաթողիկ ազգին դէմ գրելու ատեն, իրեն հակառակ
կը գրգռէ անբաւ բազմութիւն Աւրոպական ազգաց, որոնք
կ'ընդունին զսրբազան Պապերը յաջորդք սրբոյն Պետրոսի,
և Վրիստոսի ընդհանուր եկեղեցւոյն գլուխ և հովուապետ :
Բայց պէտք է խղճալով կարեկից ըլլալ հեղինակին, որ իր
գեղին պարզամիտ, կամ լաւ ևս ասել տգէտ քահանան մեծ

բանի մը տեղ դնելով, կը բաղդատէ այնպիսի բարձրաստիւ
Քահանայապետի մը և թագաւորի մը, և քան զայն կը վե-
րադասէ: ալ ի՞նչ աստիճանի ինքը գիտուն ու նրբամիտ կ'ըլ-
լայ, թող կարգացողները դատեն: Բայց աւելի մեզ ցաւալի
այն է, որ այսպիսի վատ և ամպարիշտ գրիչներու համարձա-
կութիւն տրուելով, անուանարկ ըրին զազգը բոլոր աշխար-
հի առջև, որոց մեասը Մերուժանայ և Վասակայ սրոյ և հրոյ
ըրած մեասներէն մեծ է, վասն զի կը մեռցընեն զազգը բա-
րոյապէս: Վաւ էր որ այսպիսի յօգուածներ գրողները սլատ-
կերհանին առ կօշկակարն ըսած խօսքը միտք բերելով թէ
« Կօշիկէն վեր մի՛ բարձրանար » այսպիսի կրօնական խըն-
դրոց մէջ չմտնէին, որոնք իրենց հասողութենէն և կարողու-
թենէն վեր բաներ են, և անով իրենց հետ ծաղրելի և
պախարակելի չցուցանէին բոլոր ազգը: Վասն զի Մատուա-
ծարանութիւնը որ քան զամէն գիտութիւն բարակ ու պա-
տուական է, ծիծաղելի ու թեթև բան մը կը համարուէր, ե-
թէ լրագրաց մէկ երկու էջին մէջ գրուելով լմըննար: Բազ-
մամեայ աշխատութեամբ ալևորեալ աստուածարաններ հա-
զիւ կը համարձակին հաւատոյ խնդրոց մէջ ձեռնամուխ ըլ-
լալ, ո՞ւր մնաց տգէտ և անհմուտ անձինք: Աղո՛ւկ ազգին
որ իւր դատին և իրաւանցը այսպիսի պաշտպաններ ունի:

Ա՛րսէ հեղինակը, թէ « Չորս միլիոն ազգի մը կրօնա-
կան խիղճը վիրաւորուած ժամանակը, մենք ալ որովհետեւ
նոյն բարեպաշտ ազգին սուրբ Ակեղեցւոյն զաւակն ըլլալու
բարեբաղդութիւնն ունինք, կը կարծենք եթէ հրապարակաւ
եղած թշնամանացը առջև լուռ կենալու չափ անփոյթ չենք
կրնար ըլլալ »: Աթէ ինքը չորս միլիոն ժողովուրդ չկրնար
հրապարակաւ եղած թշնամանացը դէմ լուռ կենալ, թէ և չեմ
գիտեր ո՞ր թշնամանացը, մենք ի՞նչպէս կարենանք լուռ կե-
նալ, որ հարիւր եօթանասուն միլիոն իրեն հետևող ունեցող
Վլխոյ մը բարեբաղդութեամբ որդիք կը կոչենք ինքզինքնիս:

Եւ որչափ աւելի սաստիկ կ'ըլլայ մեր վիշտը և սրտին ցաւը
երբոր անհամբերելի թշնամանք դիզուին այնպիսի Գլխոյ մը
վրայ, որոյ անունը մեր սուրբ հարք և նախնիք բազում մե-
ծարանօք և յարգութեամբ բերան կ'առնուին :

Վաղկեդոնի ժողովքէն ետքը որչափ ալ ոմանք մեզ կա-
թողիկոսներէն տգիտութեամբ և բանին էութիւնը լաւ չհաս-
կընալով սխալեցան և ընդհանուր եկեղեցիէն գլուխ քաշե-
ցին, սակայն ոչ երբէք հաստատեցաւ ազգին մէջ առ հասա-
րակ այս իրենց յանդուգն կարծիքը, և ոչ իսկ շատ հաւ-
նողներ ունեցան իրենց հակասութեանը որոնք կարենային
զլուտիքէս նզովել, և անոր հետ զլուտիքէս դատապարտող
Վաղկեդոնի սուրբ ժողովն ալ մերժել և զմեծն Վեոն նզո-
վել : Ուստի այս հակառակասիրութեան ոգին որ որջացաւ
առաւելապէս Հաղբատայ ձորերուն մէջ, ատելի էր ազգիս
կաթողիկոսաց շատերուն, որոնք ազգային ժողովներով ըն-
դունեցան Վաղկեդոնի սուրբ ժողովը, և որոնք մինչև ցը-
վերջ եօթնևտասներորդ դարուն պակաս չէին ընէր երբեմն
երբեմն իրենց մեծարանաց և հպատակութեան նամակները Հը-
ռովմայ սրբազան Վահանայապետներուն, ու բովանդակ ազ-
գին վրայ եղած ամբաստանութիւնները ցրել իբրև առաջի
մեծ դատաւորի . և անոնցմէ ընդունել օրհնութեան նամակ-
ներ և հոգևոր ու մարմնաւոր նպաստներ : Ըսոնք քովերնէս
չենք շիներ, ազգիս պատմագիրները գրեր են . Ճշմարտու-
թիւն սիրող մարդը ոչ պէտք է կոյր ըլլալ և ոչ խուլ, վա-
սըն զի Ըստուած ալ մեզ մեր գիտցածին կամ ընդունածին
համեմատ պիտի չդատէ, հապա իր գիտցածին և իր յայտ-
նած Ճշմարտութեանը համեմատ : Բայց եղան ոմանք ազգին
մէջէն, որոնք առիթ առնլով թագաւորող սրբազան Վա-
հանայապետին Պիոսի իններորդի այս տարուան փետրվարի
երկուքին գրած յորդորական նամակը, շեն ընդունիր ազգիս
հայրապետաց Հըռովմայ սուրբ գահին հետ ունեցած կապա-

կցութիւնը ու բարեկամութիւնը որովհետեւ կարգացեր էին այն նամակին մէջը « Եւ մեր նախորդ Հռովմայ հայրապետները... որչափ փութով ատ ազգը 'ի կաթողիկէ միութիւն դարձնելու ջանացեր են... : Ինչ պտուղներ քաղեր են ատ ազգիդ վրայ ըրած ջանքերնէն, և ինչ ուրախութիւն ունեցեր են երբոր յաջողեր է իրենց որ կաթողիկէ միութեան դաւանութեանը դարձած շատ հայեր անոր մէջ հաստատուն և անշարժ մնան » : Իսկ այս գրուածէն չհետեւիր թէ Հայոց ազգը միշտ 'ի Հռովմայ բաժնուեր է, որովհետեւ ժամանակ չէ որոշեր, և թէ « ջանացեր են » ըսելով չուզէր ըսել, թէ բոլոր ազգը միշտ հերձեալ էր, վասն զի ազգային պատմութիւնը հակառակը կը ցուցանէ մեզի : Մանաւանդ թէ յայտնի է որ Հռովմայ քարոզութիւնը արեւելքի մէջ շատ ատեն չէ որ սկսած է, այլ կը հաշուի Տարածման հաւատոյ ժողովոյն հաստատութենէն, որ եղաւ Գրիգոր ԺԼ, Պապին օրը 1622ին. որոյ վրայ իրեն յաջորդը Աւրբանոս ութերորդ աւելցուց Աւրբանոս ըսուած դպրոցը, որոյ մէջ կը կրթուէին նաև հայազգի տղայք և կը խրկուէին 'ի քարոզութիւն : Աւրբանոսի դպրոցին հաստատութենէն ոչ շատ ետքը, այսինքն 1700ին հաստատեցաւ Մխիթարեան միաբանութիւնը երանաշնորհ սերաստացի Մխիթարայ վարդապետին ձեռքով, որոյ գլխաւոր նպատակն էր լուսաւորել զազգը գիտութեամբ և քարոզել զբանն կենաց : Սուրբ աթոռը տեսնելով Մխիթարայ վարդապետին և անոր աշակերտացը պտուղները, ինչպէս կը վկայեն բովանդակ Հայաստանի քաղքըները ու գեղերը և նոյն իսկ Գաղատիոյ գաւառը, որն որ գրեթէ բովանդակ դարձած է Մխիթարեան հարց քարոզութեամբը, տըւաւ իրեն պատիւ Աբրայուութեան և իշխանութիւն քարոզելոյ զճմարտութիւն բովանդակ արեւելքի մէջ : Մխիթարայ արբանոսի բարի դիտմանը ոչ սակաւ գործակից եղած է և իւր ժամանակակից Աբրահամ վարդապետը, Անտոնեանց միաբանութեան հիմնադիրը :

Եյս ամէն ըսածներնէս յայտնապէս կը հետևի, թէ Սա-
սիս լրագրոյն հեղինակը և իւր համամիտք բացէ 'ի բաց կը
հակառակին իրենց նախնեացը և սուրբ հարց աւանդութեան-
ցը, որոնք յայտնապէս կը քարոզեն և կ'ընդունին սրբազան
Պապերուն գլխաւորութիւնը, իբրև մայր ամենայն եկեղե-
ցեաց :

Ու թէ այս խօսքս ճշմարիտ է, կարդա հետևեալ մեր
սուրբ Հարց և նախնեաց զրուցածները: Իսկ այն բարեմիտ
ժողովուրդը որ լրագիրները կարդալով կը հաւտան անոնց
խօսքերուն, թող կարդան այս վկայութիւնները ու իմանան,
թէ մե՞նք են ստախօսք թէ լրագրաց շարագրողները. մե՞նք
ենք մեր Հայոց հին հարց հետևողք, թէ ազգին նախատինք
բերող յօգուածներ գրողները:

Խորեհնոցի 'ի ճառն Հովհաննէսեանց. « Չայն աւետեաց հնչե-
ցէք յարեմուտս, փող 'ի Հռովմ հարէք: Օղւարճացիր և
ուրախ լեր տիեղերական մայրաքաղաք, որ նստիս յարեմու-
տըս առաքելաջահ պսակեալ լուսով աշխարհատարած ճառա-
գայթիւք...: Ուրախ լեր և ցնծա Հռովմայեցւոց եկեղեցի,
հարսն առաքելական, որ աւետարանին թէք 'ի քէն սլացան
յարեւլս »:

Եւէէ: Ի թուղթն զոր գրեցին առաջնորդք և իշխանք
ազգիս առ Թէոդոս փոքրն հանդերձ կաթողիկոսին Հովսե-
փաւ, յիշեն զուխտն սիրոյ և միաբանութեան զոր եղեալ էր
Վոստանդիանոս ընդ արքային մերում Տրդատայ, և ապա ա-
սին յաղագս նորին Տրդատայ. « Սոյնպէս և զհաւատսն որ
'ի Քրիստոս ընկալեալ 'ի սուրբ Ապիսկոպոսապետէն Հռով-
մայ, լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ »:

Օգտորիս կախողիկոս. « Հառաջագոյն քան զճնանիլն 'ի Բեթ-
ղէհէմ տայ զերկրաւոր պետութիւնն 'ի Հռովմայեցիսն, որ
չորրորդ գաղանն անուանեալ 'ի Ղանիէլէ. քանզի 'ի Հռովմ
հանդերձեալ էր կարգել զաթոսն Պետրոսի և Պօղոսի և

զգլխաւորութիւն սուրբ եկեղեցւոյ, և զՀռովմայեցւոց թա-
գաւորութիւնն կոչելոց էր 'ի հաւատս, լինել գաւազան քը-
րիստոսական դաւանութեան 'ի վերայ դիմամարտից խաչին
Վրիստոսի » :

Եւրհակ. « Նա զի լուաք թէ սուրբ և առաջին ամե-
նայն եպիսկոպոսոսանաց հայրապետն Հռովմայ, և փոխա-
նորդն Պետրոսի առաքելոյն » :

Եւրհակ յողբն Երեմիայ. « Եւ դու Հռովմ մայր քաղաքաց
Պերապոյժառ և պատուելի,
Սեծին աթոռդ Պետրոսի
Լուաքելոց գլխաւորի.
Եկեղեցի անշարժելի
Ի կեփայեան շինեալ վիմի,
Վրանց դժոխոց անյաղթելի
Եւ կնիք երկնիցն բացողի » :

Եւրհակ. « Կեցո զորդի ծառայի քո, զոր 'ի Հռովմայ
գահիցն վերապատուեցեր, ուր եղին զվէմն հաւատոյ հիման
սուրբ եկեղեցւոյ » :

Գրեթոր հանդիսս հաննաանեան Լուերապ 'ի Ռոմն էր ու
առ Իննուկենորիս Վ. Պապ Հռովմայ. « Վերակատար գլխա-
փոխանորդ Վրիստոսի, և հաստատեալ 'ի նմանէ ինքնագը-
լուխ պետդ եկեղեցւոյն Հռովմայ, որ է մայր ամենայն եկե-
ղեցեաց աշխարհի. Գրեթոր ծառայ Յիսուսի Վրիստոսի և
շնորհօքն Լստուծոյ կաթողիկոս ամենայն Հայոց և որդի սուրբ
եկեղեցւոյդ ձերոյ . . . : Յորժամ դուք որ էք գլուխ առողջ
լինիք, և մեք որ եմք մարմին առողջասցուք օրհնութեամբ
ձերով . . . : Եւ որպէս սովոր էաք յառաջ նոյնպէս և այժմ
ունիմք զնա (այսինքն զեկեղեցին Հռովմայ), և կամիմք միշտ
հնազանդ մնալ հրամանաց ձերոց, մեք և արհիեպիսկոպոսք և
եպիսկոպոսք և քահանայք և ամենայն կղերիկոսք եկեղե-
ցւոյս մերոյ » :

Յոճաննէս հախ. յաջորդն Գրեթորէ առ նոյն Իննովնորիս Գ.
 Պառ շուովայ. • Եկեղեցիս շայոց ճանաչելով զգլխաւորու-
 թիւն հովուապետութեան և զվարդապետութիւն շնորհեալ 'ի
 Տեառնէ ամենասուրբ եկեղեցւոյդ շուովայ, եղև սիրելի
 դուստր նորա • :

Ի դարաստանաբէրս Միխայիլայ Գոյն. « Իններորդ դաս վեր-
 նագոյն քան զամենեսեան պապիոս, նմանեալ քերովբէից • :

Ի ժողովն Սոյ ասէն հարժ ժողովոյն 'ի սահմանադրութեանն .
 • Մեծ եպիսկոպոսն Մեղանոյ գրէ թէ հնազանդիլ պարտ է
 սուրբ և առաքելական եկեղեցւոյն շուովայ, վասն զի հաս-
 տատեալ է ուղղափառ հաւատով յառաքելոյն Պետրոսէ .
 Քանզի որպէս մարմինն հնազանդի գլխոյն, նոյնպէս ընդ-
 հանուր եկեղեցին, որ է մարմին Քրիստոսի, հնազանդիլ պար-
 տի նմա, որ գլուխ 'ի Քրիստոսէ հաստատեցաւ եկեղեցւոյ • :

Աբգար դեսպան Միտայելի Կոնողիկոսի ասէ յարեմն շուովայե-
 ցոյ. • Որ միանգամ 'ի մէնջ ոչ դաւանի վաթոռն Պետրո-
 սի լինել ծայրագոյն, և զքահանայապետն շուովայ գլուխ
 և հայր բոլոր աշխարհի և ժառանգորդ փականաց, այնպիսին
 ուրացող է աւետարանի, Երուսաղեմայ և Ղուսաւորչեան ա-
 թոռոյ Եղմիածնի • :

Եւսչափ վկայութիւնք բերելէն ետև, թողլով ուրիշ
 այլևայլ վկայութիւնները, անցնինք Պետրոսի առաքելոյն
 գլխաւորութեանը, որոյ յաջորդք են սրբազան Պապերը, և ա-
 նով կրկին անգամ ցուցած կ'ըլլանք սրբազան Պապերուն
 գլխաւորութիւնը • :

Իմեք անտար բերանոյ Տեառն Տերոյ առ Պետրոս. • Երա-
 նի՛ քեզ Միմոն որդի Յոնանու, զի մարմին և արիւն ոչ յայտ-
 նեաց քեզ այլ հայր իմ որ յերկինս է. Եւ ես քեզ ասեմ զի
 դու ես վեմ և 'ի վերայ այդր վեմի շինեցից զեկեղեցի իմ •

և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն . . . : Թիմոն
 սիմոն ահա սատանայ խնդրեաց զձեզ խորրալել իբրև զցո-
 րեան : Լ՝ՍԼ ես աղաչեցի վասն քո, զի մի՛ պակասեսցին հա-
 ւատք քո, և դու երբեմն դարձցիս և հաստատեսցես զեղ-
 բարս քո . . . : Թ Լ՝Է տաց քեզ զփականս արքայութեան
 երկնից . և զոր միանգամ կապեսցես յերկրի եղիցի կապեալ
 յերկինս, և զոր արձակեսցես յերկրի եղիցի արձակեալ յեր-
 կինս Թ :

Շարական . « Որ գերագոյն ընտրելոց առաքելոցն դասուց
 անուանեցեր լինել զերանելին զՊետրոս գլուխ սուրբ հաւա-
 տոյ հիմն եկեղեցւոյ . . . : Փակողն արքայութեան երկնից
 սուրբ առաքեալն Պետրոս . . . : Որ զէութիւն անճառելոյ
 միաձնին յայտնութեամբ հօր ՚ի վերուստ դաւանեալ, և ե-
 րանականն արժանացեալ շնորհի վէճ անվանելի ՚ի դրանց
 դժոխոց Թ :

Մաշտոց . « Տէր Լ՝ստուած մեր որ զանուն գլխաւորի սըր-
 բոյ առաքելոյն Պետրոսի անուանեցեր վէճ, և ՚ի վերայ նո-
 րա շինեցեր զընդհանուր կաթողիկէ եկեղեցի Թ :

Յայտնուոր . « Մեծ առաքեալն Վրիստոսի սուրբն Պետ-
 րոս վէճն հաւատոյ և հիմն եկեղեցւոյ . . . : « Պետրոս վէճն
 հաւատոյ և մեծն ամենայնի, երեսփոխանն Վրիստոսի, հա-
 ւանութեամբ և կամօք ամենայն առաքելոցն սրբոց ընտրեաց
 զարդարն Հակոբբոս և ձեռնադրեաց եպիսկոպոս Լ՝րուսաղե-
 մայ . . . : « Մինն (այս ինքն Պետրոս) զկուսածին զմարդն
 Լ՝ստուած՝ որդի աստուծոյ ՚ի բնութենէ հօր դաւանեաց, ո-
 րով ՚ի Վրիստոսէ երանեցաւ հիմն եկեղեցւոյ եդաւ, և ըզ-
 փականս արքայութեան ընկալաւ . ՚ի գլուխ առաքելոցն սըր-
 բոց հաստատեցաւ լինել նոցա հրամանատու փոխանակ Վը-
 րիստոսի Թ :

Գլխիս Լ՝ոստուորից ՚ի գլխն Հանախապարտ . Թ Լ՝Է ա-
 րար զնա (զՊետրոս) վէճ հաստատութեան ամենայն եկե-
 ղեցեաց Թ :

Յոնի Երեւոյ հայրապետ . « Եւ Շմաւոն որ վէմն ա-
նուանեցաւ , վասն հաւատոյ իւրոյ կոչեցաւ նա վէմ : . . . Եւ
Սիմոն գլուխ աշակերտացն » :

Եւրեմայ . « Փակողն և բացողն վերին արքունեաց » :

Գրեգոր Եւրեմայ . « Քանզի և տէրն զայս եղ հիմն ե-
կեղեցւոյ իւրոյ ասելով առ նախնի դաւանողն Պետրոս . թէ
դու քո խոստովանութեամբդ ես իբրև զվէմ հաստատուն և
անշարժ , և 'ի վերայ այդք վիմի շինեցից զեկեղեցի իմ , այս
ինքն զամենայն հաւատացեալս և ճշմարիտ խոստովանողս
համագոյ և զուգական երրորդութեան » :

Ներսէս Նորհալի . « Եւ զիւրական անուն վիմին

Շնորհաց նմա զանշարժելին : . . .

« Գլխոյն ընտրեալ հօտին փոքու

Սաստէր զխորհուրդն ոչ զիտելոյ » :

Ներսէս Լաթրոնայի . « Երկրորդ յետ Քրիստոսի զքեզ ու-
սաք ով Պետրոս , գլուխ յետ գլխոյն դու նստար աշակեր-
տացս . վէմ հաստատութեան բնաւիցս զքեզ էարկ 'ի հիմն
տաճարիս . զգառինսն և զոչխարսն 'ի ձեռս քո աւանդեաց ա-
րածել , յետ առնելոյ զգրաւական սիրոյն » :

Սարգիս Շնորհալին . « Սիմոն վէմ , և էր վասն վէմ , զի
վէմն անտեղիտալի է արկածիցն անձրևաց , և զարկեալ սեր-
մանսն ոչ ընդունի , և 'ի հարկանելն ոչ զգայ , և ոչ փոխե-
զվիմեղէն բնութիւնն իւր , այլ մանաւանդ զհարկանողն մնա-
սէ , և այսորիկ աղագաւ Սիմոն վէմ կոչեցաւ . . . « Իսկ սա
(այսինքն Պետրոս) վասն զի հայր լինելոց էր հոգևոր ազ-
գատոհմին և գլուխ և առաջնորդ , բոլորովին ընկալաւ զփո-
փոխումն անուանն . զՍիմոնն Պետրոս անուանեալ , որ
թարգմանի վէմ : Եւ 'ի վերայ այնք վիմի շինել խոստանայ
զեկեղեցին բարձրագոյն քան զամենայն ներհակս փորձու-
թեանց , որք են դրունք դժոխոց : . . . « Պետրոս վէմ ա-
նուանեցաւ և 'ի հիմունս եկեղեցւոյ եղաւ , որ դրունք դժո-

խոց վնաս ոչ յաղթահարեցին : . . . « Եւ կացոյց նոցա (այս
ինքն առաքելոց) գլուխ և առաջնորդ և հիմն հաւատոյ զեր-
ջանիկն Պետրոս » :

Յուզանէս Երչնկացի . « Թեպէտ ամենեքեան (այս ինքն ա-
մենայն առաքելաք) գլխաւորք էին , սակայն զՊետրոս նոցին
գլուխ կարգէ , և ոչ միայն նոցա , այլ և գառանց և ոչխա-
րաց և խոյոց գլուխ ընտրէ » :

Սեբե Խոսրով . « Պետրոս վէճ անուանեցաւ 'ի Տեառնէ
և հիմն եկեղեցւոյ եդաւ : . . . Գլուխ առաքելոց : . . . Փակող
արքայութեան » :

Իգնատիոս . « Եւ 'ի վերայ այսոցիկ հաւատոյ ետ նմա
զփականս երկնից , և ետ զխոստովանութիւն նորա հիմն
քրիստոնէութեան անշարժելի 'ի դրանց դժոխոց » :

Եւս ամէն ուղղափառ հարց և հայրապետաց վկայու-
թիւններէն ետքը բերենք նաև Յովհաննէս Արուսեացիէն և
Վրիզոր Տաթևացիէն մէյմէկ վկայութիւն . որոնք թեպէտ
չատ կողմանէ ճշմարտութեան հակառակ կը զինին , բայց այս
բանիս մէջ ակամայ կամօք ճշմարտութիւնը կը խոստովանին
Խարաղամին պէս :

Յովհաննէս Արուսեացի . « Տէրն մեր Քրիստոս զչորս յատ-
կութիւնս ունի , որ միայն առանձին նմա վայելէ : Ասխ զի
Քրիստոս է սկիզբն և հիմն եկեղեցւոյ , այսպէս ասէ Պօղոս .
և զայս յատկութիւն ետ առաքելոյն Պետրոսի , յորժամ ա-
սաց . դու ես վէճ , և 'ի վերայ այդր վիժի շինեցից զեկե-
ղեցի իմ , Երկրորդ յատկութիւն , որ Քրիստոս միայն է գը-
լուխ ամենայն հաւատացելոց , որպէս ասէ Պօղոս . և զայս
գործս (այսինքն զգլխաւորութիւնն) ետ Պետրոսի , յորժամ
ասաց , դու կոչեսցիս Աեփաս , որ է գլուխ , զի նա է գլուխ
առաքելոցն . Երրորդ յատկութիւն է , զի Քրիստոս է հո-

վիւ եկեղեցւոյ, որպէս ասէ Մանտարանիչն, ես եմ հովիւ
 քաջ, և սլին, և զայս շնորհեաց առաքելոյն Պետրոսի յորժամ
 ասաց, արածեա զոչխարս իմ, արածեա զգառինս իմ: Չոր-
 րորդ յատկութիւն է, զի Վրիստոս է դատաւոր, ըստ սյ-
 նըմ, թէ զամենայն դատաստան ետ որդւոյ, և զայս ասաց
 Պետրոսի: զոր միանգամ կապեցես յերկրի եղիցի կապեալ
 յերկինս ॥

Վրիստոս Տրե-տի. « Պարտ է գիտել զի յորժամ կամե-
 ցաւ Վրիստոս զհօտն յանձնել յառաքեալն Պետրոս, նախ
 վասն սիրոյ հարցանէ: Աւ իբրև էառ զդրաւական սիրոյն...
 ապա յանձն առնէ նմա զհօտն իւր, զոր գնեաց արեամբ
 իւրով ॥

Ինչ վկայութիւններ որ մինչև հոս բերինք, որոց նը-
 ման պայծառ վարդապետութիւն գրեթէ և ոչ իսկ Հուսաց
 և Ղաթինացւոց մեջ կայ, ուրիշ մտքով չէ, բայց եթէ բա-
 րենախանձ սրտիւ քարոզելու զճշմարտութիւն: Հուսամբ որ
 յազգայնոց շատերը յօժարակամ կը գտնուին ընդունել այս
 ճշմարտութիւնը, որպէս զի չըլլայ թէ ինք իրենց հակառակ
 երևին, երբոր խօսքով կը զրուցեն թէ ազգային հարց վար-
 դապետութենէն չեմք ուղեր խոտորիլ և գործով հակառակը
 կը ցուցանեն: Աւստի կ'ըսեմք թէ ո՛վ որ հակառակի Հոռ-
 մէական եկեղեցւոյն գլխաւորութեանը և ամենայն եկեղե-
 ցեաց հովուապետ ըլլալուն, զոր կը դաւանէին առ հասարակ
 ամենայն հին եկեղեցիք այլևայլ Վրիստոնեայ աղգաց քանի
 որ անկէ չէին բաժնուեր, անոր միտքը կուրացեսլ է կամ տը-
 գիտութեամբ կամ նախապաշարմամբ և կամ չարութեամբ օ-
 անիկա կը հակառակի Պետրոսի վիմի, անիկա կը հակառա-
 կի և Վրիստոսի որ զՊետրոս գլուխ առաքելոց հաստատեց,
 որոյ յաջորդք են սրբազան Պապերը, անիկա կը հակառակի
 և իրեն սուրբ հարց Վրիգորեանց և Ներսիսեանց: Աւ ինչ-

չով կարելի է մի հօտ և մի հովիւ ըլլալ ըստ Վրիստոսի .
կամ ինչով կարելի է այլևայլ անդամներով մի մարմին կաղ-
մել ըստ Պօղոսի , թէ որ ընդհանուր եկեղեցւոյ կառավա-
նալով այլևայլ երկրորդական գլուխներ , որոնք նկատմամբ
իւրաքանչիւր ազգին կրնանք համարել գլխաւոր գլուխ , բայց
ոչ ընդհանուր եկեղեցւոյ կառավարութեանը մէջ : Այժմէ մէկ
է Վրիստոս , մէկ պիտի ըլլայ անոր եկեղեցին . մէկ և այն
եկեղեցւոյն գլուխը . վասն զի եկեղեցի ըսածնիս , որ է ժողով
հաւատացելոց կամ բարոյական մարմին Վրիստոսի , ա-
ներևոյթ բան չէ , այլ երևելի , ուստի տգիտաբար կամ շա-
րութեամբ կը մոլորին նորաղանդք երբոր կ'ընդունին եկե-
ղեցւոյ միայն աներևոյթ գլուխ զՎրիստոս , և ոչ երևելի
գլուխ երկրիս վրայ իբրև փոխանորդ Վրիստոսի . որով
Ղեկտարանին և սուրբ հարց խօսքերը , որոնք յայտնապէս
կը ցուցանեն եկեղեցւոյ երևելի գլուխ մը , ոտքի տակ ա-
ռած կ'ըլլան : Այժմէ անոնց յիմարական խօսքը ստոյգ ըլլար ,
պէտք էր որ Հաւատամքին մէջէն վերցընէինք այս խօսքերը .
« Հաւատամք 'ի Տէրայն ընդհանրական և առաքելական եկե-
ղեցի » , և մեր Սամադրքին մէջէն « Ղազիսցուք զամենա-
կայն Ղստուած վասն Տէրայնոյ սուրբ կաթողիկէ և առաքելա-
կան եկեղեցւոյ » : Թէ որ կ'ուզէ մէկը ինքզինքը ուղղափառ
Վրիստոնեայ համարել , պէտք է որ Հաւատամքին ամեն
խօսքերը ուղիղ հասկընայ , ապա թէ ոչ իրաւամբ իրեն հա-
մար ընդհանրական եկեղեցին կրնայ հերետիկոս և հերձուա-
ծող բառերը գործածել . վասն զի այնպիսին խոտորեալ է ե-
կեղեցւոյ և հարց ուղիղ վարդապետութենէն : Հերետիկոս
բառը յունական բառ է , և կը նշանակէ ընդհանրական , և այս
անունը եկեղեցւոյ առաջին հերետիկոսներուն տրուած էր , ո-
րոնք եկեղեցւոյ վարդապետութեանց մէջ զայս կամ զայն
վարդապետութիւն իբր ընտրանօք իրենց սեպհականեր էին :

Վիտենք որ Հայոց ազգին ողջամիտ մասէն և ոչ ոք
 յանձնառու կ'ըլլայ հետևող ըլլալ նորազանգից վարդապե-
 տութեանը: Բայց ներեն ինծի թէ որ ես ալ դառնամ հար-
 ցընեմ այս ողջամիտ մասին, թէ որո՞յ անուամբը կը պար-
 ծիս, ոչ ապաքէն Ղուսաւորչի և Ներսիսեանց անուամբը,
 և եթէ այնպէս է, ի՞նչու չես ընդունիր անոնց ուղիղ վար-
 դապետութիւնը, որ ըստ ամենայնի համաձայն է ընդհան-
 րական եկեղեցւոյ վարդապետութեանը: Աւստի և փուճ տե-
 ղը դքեղ լուսաւորչիան, լուսաւորչիան և լուսաւորչադասան կը
 կոչես, երբոր Ղուսաւորչի ուղիղ վարդապետութեանը չես
 հետևիր, որ կ'ըսէ յայտնապէս « Եւ արար զնա (այս ինքն
 զՊետրոս) վէ՛մ հաստատութեան ամենայն եկեղեցեաց » .
 ապա ուրեմն կամ անունդ փոխէ կամ վարդապետութիւնդ,
 որպէս զի ինքն իրենդ հակառակ չերևիս: Եթէ քու Ղուսա-
 ւորչի խոնարհեցաւ գնաց 'ի Հռովմ յոտս Սեղբեսարոսի
 Պապին, և անկէջ առաւ իր պատրիարքական իշխանութիւ-
 նը Հայոց վրայ. մի' թէ դու քան զՂուսաւորչի մե՞ծ ես որ
 չես ուղեր այս խոնարհութիւնը ցուցանել, ճանչնալով Հռո-
 մայ սրբազան Քահանայապետը գլուխ ամենայն եկեղեցեաց: Ե-
 թէ որդիք Աբրահամու էք զգործս Աբրահամու գործեսցիք, կ'ը-
 սէ Վիրքը. եթէ դուք ալ Ղուսաւորչի որդիք էք, ապա և դուք
 Ղուսաւորչի ճամբան բռնեցէ՛ք, և մի' խոտորիք անկէջ՝ ա-
 կանջ կախելով ադէտ և նննդաւոր մոլորեցուցչաց, որոնք ձեր
 հոգին կ'ուղեն կորուսանել: Եւ ինչպէս որ չեն դադրած
 ժամանակ ժամանակ աշգերնուս մէջ (Թոնդրակեցիներ, Տու-
 տէորդիներ, Տաթևացիներ, հիմա ալ չեն դադրիր զձեզ
 մոլորցընելու: Մեր քարոզած վարդապետութիւնը համաձայն
 է ձեր սուրբ հարց և նախնեաց վարդապետութեանը, զորն
 որ վերը շատ վկայութիւններով հաստատեցինք. թէ որ ու-
 տար է անկէջ, մի' ընդունիք, բայց թէ որ համաձայն և
 ընդունիք զայն, գիացած ըլլաք որ Աստուծոյ բարկութիւ-

նը կը հասնի ձեր վրայ. վասն զի կ'ըսէ՝ սուրբ Վիլբը « Հաս-
ցէ քարկուծիւնն Վստուծոյ 'ի վերայ որդւոցն անհաւանու-
թեան » :

Ի վերջ խօսքիս դառնանք քիչ մ'ալ Մխիթարեանց
վրայ՝ զրուցուած թշնամանաց խօսքերուն պատասխանա-
տուութեանը :

Յօդուածին հեղինակը Մխիթարեան հարց համար ալ
խօսք չթողուր որ չզրուցէ, իբրև թէ անոնք Հայոց ազգին
վաճառող և մատնիչ ըլլան առ թշնամիս իր խօսքին համե-
մատ : (Ըայց գիտենք որ Հայոց ազգը դժբաղդաբար իրեն
բարերարաց դէմ ապերախտ գտնուիլը իրեն ճակատակազիր
ունեցեր է շատ անգամ : Նաւական է միտք բերել Մեծին
'Ներսեսի դէմ Վրչակ թագաւորին ըրածները, սրբոյն Սա-
հակայ Պարթևի դէմ նախարարաց անիրաւութիւնը, Տրդատ
թագաւորին դէմ իշխանաց անօրէն վարմունքը : Մխիթա-
րեանք որ մինչև ցայսօր պաշտելի և պատուելի էին ընդհա-
նուր ազգէն իբրև ալգասէր և ուսումնասէր անձինք, հիմա
կղան մէկէն 'ի մէկ խարդախ և ազգասէաց անձինք : Ղշմար-
տութեան սէրը կը ստիպէ զմեզ հոս գէթ հարևանցի մը
յիշատակել Մխիթարեանց արդիւնքը, որպէս զի ցուցա-
նենք թէ ո՛րչափ կ'անիրաւի մէկը, երբոր անոնց ազգատեացի
անուն կուտայ : Ս-ստի կ'ըսենք որ, եթէ ազգասիրութեան ու հայ-
րենասիրութեան փոքրիկ կայծ մը կը վառի ձեր սրտին մէջն է, և
այն ալ թերևս Մխիթարեանց արդեամբք, Մխիթարեանց
սրտին մէջ հրդեհ կը վառի : Այլ՝ դուք ազգասիրութեան
համար փոքրիկ զոհեր ըրեր էք, Մխիթարեանք իրենց կա-
րողութեանը հետ բաղդատելով մեծամեծ և անբաւ : Վհա
դեռ նոր դարձաւ Մխիթարեանց մէջէն ձեռագրաց վրայ
անխոնջ աշխատողներէն մէկը, տասնըմէկ տարի պանդըխ-
տութիւն ընելով Հայաստանի լեռներուն և ձորերուն

մէջ : Մի՛թէ այն միտքանու թիւնը չէ՞ որ այնչափ կրօնական
 ուսումնական և ազգասիրական գիրքեր հրատարակելով ազ-
 գը լուսաւորելու կը ջանայ : Մի՛թէ այն միտքանու թիւնը չէ՞
 որ վարժարաններ ու դպրոցներ բանալով կ'աշխատի ազգին
 ապագայ յոյսերը բարեբեր ընել : Ասեցինք և տեսանք Պօլ-
 սոյ այլևայլ արուարձանները ձեմարաններ բացուիլը ազգին
 իշխանաց նպաստիւքը և ուրախացանք , բայց ո՞ւր են հիմա
 այն ձեմարանները կը հարցընեմ , անպաղարեր մնացին ա-
 պառաժի վրայ ձգուած հունափ նման :

Արդ ասոնք տեսնելով ու գիտնալով մի՛թէ մեծ բան չէ
 Միսիթարեանց ազգին վրայ ցուցած ազգասիրութեան եռան-
 դը , և մի՛թէ անկէց աւելի կրնա՞նք սպահանջել : Արով չե՞ն
 կրնար արդեօք Միսիթարեանք համարձակութեամբ բսել Պօղոս
 առաքելոյն առ Աորնթացիս ըսած խօսքին համեմատ « Արդ ի՞նչ
 իւր պակաս իցեմ քան զլաւ առաքեալսն » , մի՛թէ չե՞ն կրնար
 կ'ըսեմ իրենք ալ զրուցել թէ ինչո՞վ պակսեր ենք լաւ ազ-
 գասէրէ մը : Աւրիշ բանով չէ բայց եթէ ճշմարտութիւնը
 խօսելով , թէպէտ և ծանր ճշմարտութիւն մը : Արդ այսչափ
 իրենց ազգասիրական ջանիցը և եռանդեանը փոխարէն այսպիսի
 դառն պատուհներ քաղել տալ և նախատակոծ ընել բոլոր աշ-
 խարհի առջև իրրե անպիտան և նենգաւոր անձինք , և իրրե
 այնպիսի անձինք որ ազգին վրայ ամենեկին աշխատած չըլլան ,
 հատրերելու ապերախտութիւններ են : Աւստի գառնակակիծ
 սրտիւ և հառաչանօք կը զրուցէ ազգին համար իւրաքանչիւր
 Միսիթարեան . « Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բա-
 րոյ , ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ » : Հիրաւի
 չեն սպասեր ազգէն Միսիթարեանք իրենց արդեանցը փոխարէնը
 ընդունիլը , վասն զի միշտ մտքերնին ունին Վրիստոսի տեառն
 մերոյ խօսքը որ կ'ըսէ , ինչ որ բարիք ընէք , ըսէք միշտ , թէ
 « Առաջը անպիտանք եմք , զամենայն զոր պարտն էաք առ-
 նել արարաք » :

Այս խօսքերը զրուցելով շինք ուզեր ըսել թէ ազգեր-
 յիս միշտ ապերախտ գտնուած էր Մխիթարեանց, այլ անոր
 հակառակ մինչև այս վերջին մատ տարիներս իր երախտագիտու-
 թիւնը ցուցանելու շէո գաղթած գործով խօսքով և գրով,
 և անով իրենց բազուկները զօրացընել :

Բնածներնուս արձան յիշատակի կեցած է Մխիթարեանց
 վանքին գիւտնին մէջ ճշմարիտ ազգասէր անձանց նամակները,
 և տպագրութեամբ գուրս ելած գրութիւնները, որոնց մէջ ե-
 րախտագիտութեան նշաններ արևու պէս կը փայլին, և ո-
 րոնց մէջ Մխիթարեանք յայանապէս ազգին երկրորդ լուսա-
 տօրիւք կը կոչուին : Իսկ բարերարութեամբք իրենց ջանիցը
 լիովին հատուցող ելած է այս վերջին մատ տարիներս բաց
 ՚ի ուրիշներէն, արժանապատիւ Տատեան Յովհաննէս ամի-
 րայն, որոյ գովելի անունը տպագրեալ զրոց հետ անմահ
 պիտի մնայ Մխիթարեան միաշունտութեան մէջ և բոլոր աշ-
 խարհիս վրայ : Այս երախտագիտութեան գործերը խօսքերը
 և գրութիւնները միտք բերելով, աւելի զարմանքով կ'ըսենք,
 թէ ինչէն է ազգին վրայ այս մէծ և անակնկալ փոփոխու-
 թիւնը : Մխիթարեանք առաջ ի՛նչ էին, հիմա ալ նոյն են,
 ամենեին չփոխուեցան, այս ինքն ազգին բարեացը համար
 աշխատող և Վրիստոսի բանին քարոզող : Արդեօք ճշմար-
 տութիւնը բացայայտ քարոզելնուն համար, զոր միշտ շին
 դարձած քարոզելու, տեսնուեցաւ այս անակնկալ փոփոխու-
 թիւնը, չըսենք բովանդակ ազգին վրայ, վասն զի կը լսենք
 և կը տեսնենք որ յազգայնոց ոչ սակաւք հակառակ են՝ Ար-
 խիթարեանց դէմ եղած անվայել և անարժան գրութեանց,
 որոնք առանձին տետրներով կամ լրագրաց մէջ հրատարա-
 կեցան : Իայց կը հարցընեմ հոս միանգամ, թէ այնչափ
 տեսակ տեսակ գրքերու մէջ որ ջանացեր են Մխիթարեանք
 իրենց ազգին մէջ եկամուտ մոլորութիւնները մաքրելու և
 ընդհանուր եկեղեցւոյ Վլխոյն հետ միացընելու, մինչև հիմա

չէի՞ն տեսեր չէի՞ն կարդացեր . և այն ատեն ազգատեաց չէին Մխիթարեանք , հիմա յանկարծ եղան : Ամ թէ որ մէկը իր ազգին պակսութիւնը դիմացը դնէ ու ջանայ ուղղելու , ազգասիրութեան դէմ ըրած կ'ըլլայ , չէ նէ յազգասիրութենէ շարժեալ ըրած կ'ըլլայ . կամ թէ ազգին պակսութիւնը պաշտպանելը ազգասիրութիւն համարելու է :

Ազգասիրութիւն և հաւատք իրարմէ զատելու խնդիրներ են : Ազգասիրութիւնը է գերագոյն աւանդ մը իւրաքանչիւր ազգաց առանձինն պարգևեալ , և ամէն ազգ պատական է իրենինը ամբողջ և անարատ պահել . իսկ հաւատքը ոչ այսպէս . վասն զի հաւատք ըրածնիս ուրիշ բան չէ , բայց եթէ յայտնութիւն աստուածային , և զոր Վրիստոս Տէրն մեր ընդհանուր ամէն ազգաց համար միօրինակ տուած է առանց ամենևին խտրութիւն ընելու և որոշելու . վասն զի կ'ըսէ Պօղոս առաքելոյն բերնով « Չիք խտիր ոչ հրէի և ոչ հեթանոսի » : Աստի եթէ մէկը ուղղափառ հաւատքը պաշտպանելու ըլլայ , անով ազգասիրութեան հակառակ դործած կ'ըլլայ . կամ թէ , նոր ճշմարտութիւն մը որ ազգին մէջ առաջ ընդունուած չըլլայ , ետքը թէ որ մէկը ընդունի , անով ազգասիրութիւնը ոտքի տակ առած կ'ըլլայ . ապա թէ ոչ պէտք չէր ազգերնիս Վրիգոր Առևսաւորչի ձեռքով քրիստոնէական հաւատքը ընդունել , ազգասիրութեան դէմ չդործելու համար :

Իայց թէ որ չգիտցող մը Մասիս լրագրոյն այս յօդուածը ու միւս անցած լրագիրներուն ոմանց գրածները կարդայ , պիտի մտկարերէ թէ Մխիթարեան միանձունք արդեօք ի՞նչ սարսափելի հայհոյութիւններ , զրպարտութիւններ ու նախատական խօսքեր գրեր և ըսեր են ազգին վրայ , որոնց չըկրնալով համբերել լրագրաց շարագրողները ու իրենց նման ազգուհիները , կը յանդիմանեն անոնց ամարգութիւնը ու քրիստոնէական եղբայրսիրութեան դէմ ըրած հայհոյութեան

յանցանքները : Մտիթարեանք խղճմտանօք կը վկայեն
 թէ ազգին պատուոյն և ամբողջութեանը դէմ այնպիսի բան մը
 ըրած և խօսած չեն, որ արժանաւորին այսպիսի ամարդա-
 կան գրութեանց . որովհետեւ զիտեն ստուգիւ թէ զազրը ան-
 պատուելով իրենք զիրենք նախատած կ'ըլլան : Միայն հաս-
 մութիւնը, և գլուխ եկեղեցւոյ ընդունելով կեկեղեցւոյ Վսխոյն հետ
 հանայապետը, նաև ազգիս հայրապետացը հետեւելով, ան-
 կէց բաժնուողները հեռիեւ կոչեր են . և եթէ բաց 'ի բաժ-
 նուելէն հաւատոյ վարդապետութեան մէջ սխալողներ ալ ե-
 շեր են, անոնց ալ հերեփէիս ըսեր են :

Մարդու մը որ հաւատոյ ուղիղ վարդապետութիւնը կը
 դաւանի, անոր ոչ ոք կրնայ հերետիկոս ըսել, Մտիթարեանց
 խօսքը հաւատոյ և սուրբ եկեղեցւոյ ուղիղ վարդապետու-
 թենէն խոտորեալներուն վրայ է, թէպէտ և այսպիսիներ
 բազմաթիւ չըլլան ազգին մէջ : Չենք զիտեր թէ ազգին հի-
 մակուան դաւանանքը ինչ է, վասն զի մենք մեզմէ մասնա-
 ւոր հակառակասէր անձանց գրութիւններէն չենք ուզեր
 ընդհանուրին հետեանք հանել, որոց հետեանքը զիտենք
 որ շատ տխրական կ'ելլէ : Միայն ընդհանուր ազգին
 մօտ ատեններուն դաւանանքին ճաշակը ունինք շրտեփեփեփ
 մէջ, որ հրատարակեցաւ 1820ին, որոյ մէջ ժողովով ստու-
 րագրեցին Սոոյ Աիրակոս կաթողիկոսը, Ա. պօլսոյ Պօղոս
 պատրիարքը, Աշմիածնի և Արուսազեմայ արքեպիսկոպոսներ-
 ըրը և գործակալները, և ուրիշ անթիւ եկեղեցականք և իշ-
 խանք : Բայց ափսո՛ս որ դժբաղդութեամբ անգործագրելի
 մնաց շրաւէր սիրոյն, և անոր հետ փափաքելի միաբանու-
 թիւնը . և այս բանիս պատճառ ուրիշ բան չէ, բայց եթէ
 բանսարկուին սատանայի խորամանկութիւնը, որ միշտ կը նա-
 խաւճի բարւոյն, և անոր առջև արգելքներ և դժուարութիւն-
 ներ կը հանէ :


Ըհաւաստիկ իմացանք Մխիթարեանց մի միայն յանցանքը ,
 որով արժանաւոր կը համարուին ազգային ըրագիրներէն այնչափ
 տեսակ տեսակ անարգական խօսքերու : Ըրդեօք այս ազգային
 ըրրորդարդան խորենացւոյն ողբը , որ բաւականապէս յան-
 ցաւոր կը ձգէ զազգը իր պակասութիւններովը , անոր ինչ անարգա-
 նաց խօսքեր պիտի տան : Բայց հոս հարցընենք , այս հեր-
 յեւը և հերեմէնք բառերը Մխիթարեանք շիներ են թէ 'ի
 նախնեաց ունինք , որոնց վրայ գործածեր են արդեօք նախ-
 նիք . որ եկեղեցին ուղղափառ իմացեր են , ուսկից բաժնուող-
 ները հերձեալ կոչեր են : Բնաւ պատմութեան մը մէջ շենք
 կարգացիր թէ Ըրեւնեան եկեղեցին Ըրեւելեան եկեղեցիէն
 բաժնուեր է , այլ միշտ հակառակը . և Զունաց եկեղեցին ա-
 ռաջին հերձուածը ընելով փոտայ ժամանակէն , արժանացաւ
 այս անուան : Ըրեմն Մխիթարեանք ալ ըստ իւրեանց ճա-
 նաչման ընդհանուր միութենէ Վլխոյն եկեղեցւոյ բաժնուող
 Հայերը հերձեալ որ ըսեն , յանցաւոր կ'ըլլան : Ինչ որ շըն-
 դունին , թող ներհակչ աստուածաբանօրէն հաստատեն , և
 ցուցանեն թէ իրենք միօցեալ են և ոչ հերձեալ , զոր յաւի-
 տեան շկարենան պիտի ցուցանել : Ըլլան զի Հաւատաւքին մէջի
 սովորած ընդհանրական և առեւտրական եկեղեցին ոչ երբէք պի-
 տի , ըլլայ Հայոց եկեղեցին , որ չունի առաքելականութիւն ,
 վասն զի Թադէոս առաքելոյն յաջորդութիւնը շմնաց
 Հայաստանի մէջ . չունի ընդհանրականութիւն , վասն զի
 բաց 'ի Հայերէն ոչ որ զինքը կ'ընդունի . ուր Հառովլայ ե-
 կեղեցւոյն կամ Ալեքսանդրեան աթոռոյն հետեողքն են ան-
 բաւք ամէն ազգերէ . ուստի և Հայն ալ պատիւ պիտի հա-
 մարէր իրեն , որդի կոչուիլը այսպիսի եկեղեցւոյ , որոյ վը-
 րայ յայտնի կը տեսնուին ճշմարիտ եկեղեցւոյ ամէն նշան-
 ները :

Ըմէն մարդ կը փափագի 'ի ճշմարտութիւն գիմել , և ճըշ-
 մարտութիւնը իրեն քարոզողներուն 'ոչ ապերախտ այլ ե-

բախտապարտ կը գտնուի . միայն Մասիս լրագրոյն այն յո-
գուածը շարադրողին և իւր համամիտ անձանց տրուած է ճշը-
մարտութեան ունկնդիր չլլալ , այլ և խոժոռիլ , որպէս զի
ստուգի իրենց վրայ Վրիստոսի Տեառն մերոյ այս խօսքը
« Սիրեցին զխաւար առաւել քան զւոյս զի էին գործք իւ-
րեանց շարութեան » : Չարութիւն չենք ուզեր տալ բոլորին ,
բայց տղիտութիւնը կրնանք տալ բազմութեան , որով լա-
կը համարին մութի մէջ պտըտիլ քան թէ լոյսը ելլել : Աը-
խիթարեանք աստուածասիրութենէ և յընկերսիրութենէ շար-
ժեալ եթէ քարոզեն ճշմարտութիւն քրիստոսական կրօնի
և ազգային աւանդից , միթէ անով կ'ուզեն տիրապետել իւ-
րաքանչիւրին խղճմտանաց վրայ և բռնի համոզել . բնաւ եր-
բէք չեն ունեցած այս դիտաւորութիւնը :

Կան բազումք հայոց ազգէն որ կ'ուզեն լսել ճշմար-
տութիւն և գալ յուղղութիւն . բայց և միանգամայն չեն ու-
զեր իրենց ազատութիւնը կորուսանել ազգային և ծիսական
սովորութեանց և արարողութեանց և աւանդութեանց մէջ ,
Օնոյնը և Միսիթարեանք կը փափագին հազարապատիկ ա-
ռաւել , և գուցէ այս բանիս համար ալ է որ երբեմն վիշտ
քաշեր են իրենց եղբայրներէն : Օնոյնը կը փափագին նաև
Պետրոսեան աթոռոյն ժառանգականները , որ ոչ երբէք ու-
նեցած են ազգային հին սովորութիւնները և ծէսերը փոխե-
լու դիտաւորութիւնը . վասն զի յայտնապէս կ'ըսեն « Ոչ
ինչ է նորոգելի » . հապա կը փրնտուեն ամէն ազգերէն ընդ-
հանրական և առաքելական եկեղեցւոյն ուղղափառ հաւատքը
և անոր Վլխոյն հնազանդութիւնը : Ինչպէս որ յայտնի կ'ըլտես-
նուի թագաւորող Պիոսի իններորդին 1848ին առ Մրեւելեայս
գրած շրջաբերական թղթէն . Իսկ թէ երբեմն զարտուղած
ալ երևի Հոովմայ գահը այս արդար դիտաւորութենէն , պէտք է
զրուցել ճշմարտութեամբ , թէ « Լ.զգ քո և քահանայա-
պետք մատնեցին զքեզ » :

Այսչափ առ ժամս բաւական կը համարինք ճշմարտա-
 սէր մարդու մը . իսկ պնդագլուխ յամառեալ մարդկանց , և
 ոչ սուրբ Մեծարանը բաւական եղեր է համոզելու , ինչ-
 պէս են այսչափ տեսակ աղանդաւորներ և հերետիկոսներ .
 ուստի չենք համարձակիր հարկաւ մենք մեր քարոզութիւնը
 սուրբ Մեծարանէն վեր դնել ու աւելի զօրաւոր . հասկա
 միայն կ'ըսենք թէ որք « Մովսէսի և մարգարէից ոչ լսեն ,
 և ոչ թէ 'ի մեռելոց որ յարիցէ հաւատասցեն » :



(Faint, mostly illegible Armenian text, likely bleed-through from the reverse side of the page.)

